

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ «ՉԱՐԻՆՑՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

Այս տարի լրացավ մեր դարաշրջանի մե-
փագույն բանաստեղծներից մեկի՝ Եղիշե Չա-
րինցի ծննդյան 100-ամյակը: Ի պատիվ այդ
մեծ հորելյանի, 1937 թվականը հայտարարված
էր «Չարինցյան տարի», որի ընթացքում թե
Հայաստանում և թե արտերկրում տեղի ունե-
ցան մի շարք հանդիսություններ ու գիտական
նստաշրջաններ: Երևանի պետական համալսա-
րանը ևս անմասն չմնաց այդ միջոցառումնե-
րից: Այստեղ նույնպես տեղի ունեցան բազ-
մաթիվ գիտաժողովներ, մրցույթներ ու տոնա-
խմբություններ, որոնց մեջ իր կարևորությամբ
աչքի ընկավ հորելյանական «Չարինցյան ըն-
թերումները»:

Այդ ավանդական «Ընթերցումները», որ գու-
մարվեցին հոկտեմբերի 8—9-ին, կազմակեր-
պել էր հայկական բանասիրական ֆակուլտետի
հայ նորագույն գրականության ամբիոնը: Նըս-
տաշրջանը բացելով, հայ գրականության ամ-
բիոնի վարիչ, ՀԳԱԱ ակադեմիկոս Հր. Քամ-
րազյանը նշեց, որ արդեն շուրջ մեկ տարի է,
ինչ բովանդակ հայությունը հանդիսավորաբար
նշում է իր հանճարեղ զավակի և մեծ նահա-
տակի՝ Եղիշե Չարինցի ծննդյան հորելյանը:
Հայ բանաստեղծների մեջ ոչ մեկի ճակատա-
գիրը այնքան հարազատ և նման չէ իր ժո-
ղովրդի ճակատագրին, որքան Չարինցինը, ա-
սաց ելույթ ունեցողը: Նա տեսել է իր ժողո-
վրդի մի ամբողջ հատվածի մահը, որպես կա-
մավոր գինվոր քայլել է ամայացած հայրենի-
քով, ապրել է նաև վերելքի խանդավառ պա-
հեր, կյանքով և հոգով անցել է սոցիալական
ու քաղաքական հզոր ցնցումների միջով և,
ինչպես ինքն է հրաշալի քնութագրում, իր ժո-
նումները կանգնեցրել է մեծ տարերքի բո-
վում, երբ կործանվում էր շուրջը ամեն, ամեն
ինչ, ձգտել է անվերջ դաշնություն, երբ ան-
գաշն էր շուրջը, աշխարհի և ազգության կյան-
քը: Այս մեծ տարերքի երգիչը, սակայն, ա-
մեն ինչ ընկալում էր իր արնաքամ երկրի հո-
գու հայացքով: Նա ստեղծել է իր երկրի ող-
բերգության և հարության ցնցող պատկերնե-
րը: Այստեղ նա մրցակից չունի՝ գուցե՝ նաև
սքզ խորհրդային գրականության մեջ, քանի որ
մշտապես ցույց է տվել այն խոր կապը, որ
կար փոքր ժողովուրդների և համաշխարհային
շարժումների միջև:

Նա ապրել է բազում ցարսափներ իր ողջ

կյանքում, մարտի դաշտում, աքսորում և բան-
տում: Ասեմ նաև, շարունակեց Հր. Քամրազ-
յանը, որ ոչ մի կուսակցություն չի սիրել նը-
րան, քանի որ հանճարը անհուն է, իսկ կու-
սակցությունները՝ ժամանակավոր և միակող-
մանի: Անշուշտ, մեծության հիմքերի հիմքը
ազգային զենն է, որին խոր իմաստ է հա-
ղորդում ապրած կյանքը, իմացության ուժը,
տառապանքի և սիրո զորությունը: Հոգեբանա-
կան խորքը, արտացոլման և ընդգրկման ուժը,
վիթխարի մազնիսական ներքին ուժը, այս ա-
մենը, իհարկե, հազվադեպ են: Բայց ես
հատկապես ուզում եմ ընդգծել սիրո և հպար-
տության, Հայաստանի և հավերժության ձրգ-
տումը:

-Կգա ժամանակ, իր բացման խոսքի վերջում
ասաց պրոֆ. Հր. Քամրազյանը, երբ մեր հո-
գեբանները և գրական մարդիկ նրբորեն կխո-
սեն ոչ միայն նրա հայտնի երկերի մասին,
այլև սեպագրությունների, անավարտ տների ու
սողգերի, աղամանդյա ընկորների մասին, որոն-
ցից լույս է ցուում: Եվ առհասարակ շարինց-
յան հանճարի լույսը շողալու է սերունդների
հավերժական երթի առջև:

Առաջին զեկուցումը նվիրված էր «Չարինցի
եներկայությունը» 1937—1954 թվականներին»
թեմային, որով հանդես եկավ հայ նորագույն
գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.
Գարբիելյանը: 1936-ից Եղիշե Չարինցի ղեմ
սկսվում են քաղաքական հալածանքները, ա-
սաց զեկուցողը: 1937 թ. հուլիսի 26-ին ստո-
րագրվում է ձերբակալման որոշումը: Նոյեմ-
բերի 28-ին բանտում Չարինցը մահանում է:
Դրանից հետո նրա ստեղծագործություններն
արգելվում են, այլևս ոչ մի գիրք, ոչ մի բա-
նաստեղծություն մամուլում, ոչ մի խոսք նրա
մասին: Չարինցի ստեղծագործությունները կար-
դացողների նկատմամբ սկսվում են հալա-
ծանքներ, և այդպես մինչև 1954 թվականը:
1953-ից սկսվում է Չարինցի արդարացման
գործի քննությունը և 1954-ին հաստատվում
է, որ նա մեղավոր չէ, արդարացման որո-
շումը ստորագրվում է 1955 թ. մայիսի 25-
ին, նույն տարում էլ լույս է տեսնում նրա
երկերի միահատորակը: 1954-ից, փաստորեն
Չարինցը թեև ոչ պաշտոնապես, բայց նախկին
Քուլլատրվել էր:

Այդպիսով, շուրջ 18 տարի Չարինցը սխլվեց

ընթերցողից, նշեց զեկուցողը, պարտադրվեց նրա «մոռացումը»: Բայց իրոք նա «խլվեց» ընթերցողից, իսկապև՝ նա շմանակցեց մեր գրականության հետագա ընթացքին: Անշուշտ, այլ կլինե՞ր Չարենցի դերը, եթե նա կենդանի մնար և շարունակեր գրական առաջնորդի իր դերը, որ ուներ մինչև 1937-ը: Այդպես շեղավ, շարունակեց զեկուցողը, բայց մնաց Չարենցի՝ ներկայությունը որպես հմայք և գիտակից ըմբռնում, հիշողություն և գիրք: Իր սերնդակիցները, նույնիսկ գրական թշնամիները, ներառյալ մոռանալ չէին կարող, որովհետև լեւ մծծ էր ավելի, քան եղավ՝, իսկ մեծերի լույսը շլացնող է: Երիտասարդ սերունդը, որ նոր էր գրական ասպարեզ մտնում, հմայված էր նրանով: Չարենցին ընթերցող զանգվածը ներան անգիր գիտեր, հիշողության վրա ինչպե՞ս արգելք կդնեին: Չարենցի գրքերը թաքցնողներն էլ քիչ չէին: Բազմաթիվ օրինակներ թույլ են տալիս ասելու, որ ետարենցյան շրջանի հայ բանաստեղծությունը, սալիթաբուրներն ու վերելքների իր ճանապարհին, հենց 1937—54 թթ. շրջանում տարաբնույթ ազդեցություններ կրեց Չարենցից: Չարենցը իր եղբրական մահից հետո էլ կենդանի ու ներկա է եղել մարդկանց սրտերում ու հիշողության մեջ: Նրա անունն ու ստեղծագործությունները միշտ էլ հիշվել ու վկայակոչվել են, այն ծանր տարիներին նրա մասին արտահայտվել են կարծիքներ, գրվել են հուշեր ու բանաստեղծություններ: Ապա զեկուցողը վկայակոչեց մի շարք գրողների գնահատանքի խոսքերն այն մասին, որ Չարենցը եղել է իրենց ուսուցիչը և հայ բանաստեղծության մեծագույն ներկայացուցիչը: Այսպիսի բարձր կարծիքներ Չարենցի մասին արտահայտել են սփյուռքահայ բանաստեղծ Հարութ Կոստանդյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սեակը և շատ ուրիշներ, որոնք գրական ասպարեզ են իջել Չարենցի քրեացակայությանը շրջանում:

Զեկուցողն ապա Չարենցի «ներկայություն» լուրջ փաստարկ համարեց նաև 1946 թ. լույս տեսած «Հայ գրականության ընտիր էջեր» անթոլոգիան, որի մեջ նրա կազմողները ինչ-որ կերպ զետեղել էին նաև Եղիշ Չարենցի բանաստեղծություններից մի քանիսը: Այն տարիներին, վերջում ասաց զեկուցողը, Չարենցի «ներկայությունը» զգացվել է ամենուր, գրականության ու մշակութի գործիչների, գիտնականների ու մտավորականության շրջանում, ինչպես և ժողովրդի մեջ միշտ վառ է եղել նրա հիշատակը:

Փուռնախոստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ. Անանյանը իր «Չարենցը Նիկո Աղբալյանի գնահատության» զեկուցման մեջ ցույց տվեց նշանավոր հասարակական գործիչ և քննադատ Ն. Աղբալյանի դերը երիտասարդ Չարենցի ստեղծագործությունների գնահատման գործում: Զեկուցողը հավաստեց, որ Ն. Աղբալյանն իր 1919 թ. հոկտեմբերի 18-ին տված զեկուց-

մամբ, ըստ էության, սկզբնավորում է շարենցագիտությունը: Աղբալյանը ոչ միայն ընդունում է բանաստեղծի տաղանդը, այլև բացահայտում է այդ տաղանդի մի քանի առանձնահատկությունները: Այն, որ Չարենցը գրականություն մուտք է գործում Տերյանի հետքերով, որ նրա ստեղծագործությունները կենսահաստատ են, և որ երիտասարդ բանաստեղծի տաղանդը համակողմանի է:

Չարենցի բանաստեղծություններին Ն. Աղբալյանն անդրադարձել է նաև հետագայում, նշեց զեկուցողը, երբ իր բարեկամներից մեկի միջոցով Հայաստանից նվեր է ստացել նրա «Ռոմանս անսերը» և այդ շրջանի այլ գործեր, քննադատը շատ խիստ մի նամակ է գրել բանաստեղծին, որը նույնպես վճռական նշանակություն է ունեցել Չարենցի ստեղծագործական կյանքում՝ ձախ ըմբռնումները մերժելու գործում: Չարենցի տաղանդն ընդունելուց բացի, Հայաստանի առաջին Հանրապետություն արվեստի նախարար Ն. Աղբալյանը նաև հովանավորել է նրան՝ բանաստեղծին աշխատանքի ընդունելով նախարարությունում:

Հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ Ա. Ավագյանի «Կոստան Չարյանը Չարենցի մասին» զեկուցումը, որն ասես նախորդի շարունակությունը լինե՞ր, նույնպես նվիրված էր Չարենցի գործի գնահատությանը: Զեկուցողն անդրադառնալով սփյուռքահայ անվանի գրող Կ. Չարյանի և Ծ. Չարենցի բարեկամական կապերին ու առնչություններին, ինչպես և հակասություններին, ցույց տվեց, որ Կ. Չարյանը՝ սկսած 1920-ականներից մինչև Չարենցի մահը, հետևել է նրա ստեղծագործական բարդ ու հակասական ճանապարհին և իր «Անցողը և իր ճամփան» հուշագրության մեջ ու «Մամուլի ոսկորները» վեպում կերտել է Եղիշ Չարենցի գրական կերպարը: Կ. Չարյանի բնութագրումներում Չարենցը հանդես է գալիս թե՛ որպես հակասական գաղափարներով ու կյանքով ապրած մի անձ և թե՛ որպես հանճարեղ բանաստեղծ:

Չարյանի քննադատական վերաբերմունքը մեր գրականության հսկաներից մեկի նկատմամբ, ասաց զեկուցողը, կարելի է բնութագրել մի քանի պատճառներով: Նախ՝ Կ. Չարյանը վերավորված ու խոցված էր այն երկրից, որի ներկայացուցիչն էր Չարենցը: Զինք մոռացվում Չարենցից ստացած անձնական վիրավորանքները, որ մնացել էին քսանական թվականների առաջին տարիներին, երբ միմյանց «բռնչեկ» ու «ղաշնակցական» էին անվանում՝ նկատի ունենալով միմյանց քաղաքական հայացքների փոփոխականությունը: Ի դեպ, միջադեպը հետաքրքրական է նաև նրանով, որ պարզվում է հայ մտավորականության հոգեվիճակը, նրանց պատրաստակամությունը՝ ամեն ինչ՝ կյանք, նվիրում, գաղափար զոհաբերել ժողովրդի ճակատագրի համար: Պակաս նշանակություն չունենին նաև Չարենցի և հենց իր՝ Կ. Չարյանի

բարդ ու հակասական բնավորութիւնն գծերը, տրանցից մեկն էլ իր իմացութիւնների գիտակցման բարդութիւնն էր, երկուսի էլ անհանգուրժողական վերաբերմունքը կյանքի շատ կերտլթենների, նաև միմյանց հանդէպ, Հիշենք թեկուզ Ծ. Զարենցի մի պամֆլետը՝ գրված 4. Զարյանի դեմ դեռևս 1920-ական թթ. վերջերին:

Իր երկերում 4. Զարյանը Զարենցին բնութագրում է նաև որպես հայոց երկրի էութիւնը և ոգեղեն հզորութիւնը մարմնավորող բանաստեղծ, այնուհետև շեշտեց զեկուցողը, որն ամեն ինչ շափում ու գնահատում էր իր Հայաստան աշխարհով ու նրա ազգային հեռաքրքրութիւններով: 4. Զարյանն իր վերոհիշյալ ստեղծագործութիւններում թեև Զարենցին ներկայացնում է որոշ բացասական գծերով, բայց և այնպես նա տեսնում է Զարենցի ամբողջ մեծութիւնն ու հանճարը: Մի գործոն, որն էական դեր է խաղացել նաև նրանց միջև մտերմական կապեր հաստատելու գործում: Իսկ այդ կապերն անավել ցայտուն են դրսևորվել, երբ Զարենցը 1925 թ. եղել է արտասահմանում:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ Ծ. Զարենցի ու 4. Զարյանի գրական դավանանքների գրսևորումներին և այդ բնագավառից բերեց մի շարք փաստեր ու վկայութիւններ, որոնցով ցույց տրվեց երկու գրողների բարեկամական կապերն ու հոգեկան ներքին սերտ միանութիւնը ժամանակի ալիքախումբների հորձանուտում:

Շոթա Ռուսթավելու անվան հայ-վրացական բանասիրութիւն կարիքների գիտաշխատող, դոց. Հր. Բայրամյանի զեկուցումը վերնագրված էր «Եզդիչ Զարենցը վրաց գրողների հուշերում»: Նրանում մի շարք նորահայտ հուշերի ու փաստերի հիման վրա զեկուցողը ցույց տվեց, որ Ծ. Զարենցը սկսած 1910-ական թթ. վերջերից մինչև իր եղբորական մահը անձնական ու ըստեղծագործական սերտ կապեր է ունեցել վրաց գրական ու մշակութային գործիչներից շատերի հետ: Նախ, պետք է նշել, ասաց զեկուցողը, որ Ծ. Զարենցի գրական մկրտութիւնը տեղի է ունեցել Վրաստանի մայրաքաղաքում: Ինքը՝ Զարենցն էլ, հաճախակի լինելով հիշյալ քաղաքում և երկար ժամանակ ապրելով այնտեղ, ակտիվորեն մասնակցել է տեղի գրական կյանքին, Հայարտանը կազմակերպվող միջոցառումներին, աշխատակցել է թերթերին ու հանդեսներին, կարդացել զեկուցումներ ու դասախոսութիւններ: Այդ ընթացքում նա հատկապես ավելի խոր ու սրտաբուխ մըտերմութիւն է ստեղծում հայ և վրաց մի խումբ հեղինակավոր գրողների ու մշակութային գործիչների հետ: Նա սրտաբուխ մտերմութիւն է ունեցել Տիցիան Տաթևեի, Պատր Բաշվիլու, Նիկոլո Միծիվիլու, Վալերիան Գափրիկազմիլու և ուրիշների հետ, որոնք բոլորն էլ, ցավոք, հետագայում ունեցան նույն եղ-

րական ճակատագիրը, ինչ Զարենցը:

Այսօր, երբ ժամանակի ու տարածութիւն բարձունքից հետադարձ հայացք ենք գցում հատկապես մեր օրերի համար ուսանելի այդ կապերի վրա, ասաց զեկուցողը, համոզվում ենք, որ գործունեութիւն մասշտաբների և հարուստ բովանդակութիւն շնորհիվ դրանք դուրս են գալիս անձնական հարաբերութիւնների շրջանակներից և ստանում են համազգային նշանակութիւն:

Վերջում զեկուցողը եզրակացրեց, որ հայ և վրաց ժողովուրդների ավելի մերձեցնելու հարցում Զարենցը ցուցաբերում էր շահագրգիռ վերաբերմունք և դրա ամենակարևոր գործոններից մեկն էլ նա համարում էր գեղարվեստական գրականութիւն լավագույն արժեքների փոխադարձ թարգմանութիւնն ու մասսայականացումը՝ ինքը գառնալով այդ գործի ոչ միայն գաղափարախոսը, այլև ամենակատիվ կազմակերպիչներից մեկը:



Հոկտեմբերի 9-ին գիտական նստաբանը շարունակեց իր աշխատանքը, որի ընթացքում լավեցին մի շարք հետաքրքիր զեկուցումներ: «Զարենցի ողբերգութիւնը» թեմայով անալիզ զեկուցումը, որով հանդես եկավ մեծ բանաստեղծի ժամանակակից, տաղանդավոր գրող Հր. Հովհաննիսյանը, արժարժում էր Եզդիչ Զարենցի ողբերգութիւնն շատ կողմեր: Երբ պատկերացնում ես նրա կարճ կյանքի երկար ճանապարհը, ասաց զեկուցողը, երբ քննում ես նրա ամբողջական գործը, հանգում ես մի եզրի, Զարենցի կյանքը մի իրական ողբերգութիւն է՝ թախծալի սկիզբով ու զարժուրելի ավարտով: Այդ ողբերգութիւնն սկսվում է մանկութիւն Դպրոցական Զարենցը դեռևս հայրենի Կարս քաղաքում կարծես ընդունեց մենավորութիւնն նշանակել և գրա ներգործութիւնն տակ մնաց մինչև իր Ֆիդիկական վախճանը: Նա մենակ էր բազմանգամ հորենական տանը, մենակ էր ռեալական դպրոցում, մենակ էր գաւառական Կարս քաղաքում: Հետագայում նույն մենակն էր կամավորական ջոկատներում, նախահեղափոխական և հեղափոխական Ռուսաստանի բազմաժողով ամբոխների մեջ, անկախացած Նաիրի երկրում, խորհրդայնացած Հայաստանում: Մենակ էր, քանզի հոգով ու բնավորութիւնով, գիտելիքներով ու մտքերով, ճաշակով ու տենչերով, մղումներով ու ձիրքերով միշտ բարձր է եղել շրջապատից ու իրեն շրջապատողներից: Դա հանճարի գոյութիւնն էր և հանճարի բախտը: Իր թափառ կյանքում նա գրական, հասարակական, կուսակցական, աշխատանքային, պարզապես կյանքի բազմաթիվ ընկերներ, մտերիմներ ու բարեկամներ ունենալով, բայց իր վաղ հատուկացած զբացմունքով և վաղ զարգացած մտքով միշտ բարձր մնաց ուրիշներից: Զարենցը միշտ մնում էր

մի տեսակ հակացուցված իր շրջապատին: Այդ մենավորությունը ծնվեց ու մնաց նրա մեջ կարծես իբրև մշտական կեցութիւն ձև: Բայց եւ կրավորական ու մեկամաղձոն մենակեցից չէր: Իր իսկ խոսքերով ասած՝ «նեղքին էնեք-ժին» նրան մղում էր զժողովրդին, ներհակ գիրքի, անձնական ըմբոստության, հեղափոխական զանգվածներին մերձենալուն:

Իր հոգեկան տվայտանքներում, այնուհետև ասաց զեկուցողը, Չարենցը երբեմն հայացքը սուզում էր պատմության խորքերը՝ զուգահեռներ գտնելու հնօրյա հայտնի բանաստեղծների և իր կյանքի ուղիներում, բաղդատելու ժամանակները, իշխանություններն ու բարբերը, զուցե գտնելու ժանր իրականությունից արդարացման կետեր, զուցե ճար գտնել՝ ամոքելու կյանքի ցավերը, մեղմելու, սփոփելու հոգու խռովքը, քրիստոսաբար հաշտվելու դժբանքներուց հետո: Նրան տևարար հուզում էին աքսորված Օվիդիոս Նագոնի վիճակը, մերժված Ֆրիդրուսու ճակատագիրը, օտարված Հայնրիխ Հաննի երևույթը, հայածված եւրաստուր Արովյանի կերպարը, որոնք նույնպէս հետադարձվել էին պաշտոնական բռնություններից: Այդ զուգորդումներից նա կարծես ուժ և կարողություն էր քաղում իր դիմադրության ու կենսունակության համար: Նա տննում էր ազատվել օրհնասի տնեւրից, փարատվել ժամանակի ժանգից, խոստափել շրջապատի թունալից օդից: Նա ուզում էր հենկել շատ փոքր մի պատմարի վրա, դա իր մերձավոր համախոհներն էին, իր տաղանդի երկրպագուները, իր ճաշակակից մտերիմները՝ Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Միքայել Մազմանյանը, Թովմանու Մելիքյանը, Արուս Ոսկանյանը, Ներսիկ Ստեփանյանը, ևս մի քանիսը... Բայց վրա հասած տարիները ոմանց տարան գերեզման, ոմանց՝ մեկուսարան, ոմանց՝ «զգուշարան»: Նրա հոգեկան սփոփանքի, գունաթափ հույսի փոքր դաշտն աստիճանաբար աճելի էր նեղանում, հատվում, կրքնատվում շագրկնու կոթորու նման: 1936-ին սկսված զանգվածային աղետից հետո, մի ողջ տարի նա ընկավ ծանր խոհերի, անձնասպան կոտորածների տանելարանը: Նրան մաշում էր այն իրողությունը, որ իր պատճառով մեղադրվողները բանտում են, իսկ ինքը՝ դրսում: Եվ նա ամեն ինչ արեց՝ նորից հաստատելու իր հին բաղձանքը. «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձից բացի...»:

Չարենցի ողբերգությունը շարունակվել է մահից հետո, այնուհետև ասաց զեկուցողը: Նրա ֆիզիկական քայքայությունը, հոգևոր ժառանգության երկարամյա կալանքը միայն իր՝ հանճարեղ գրողի ողբերգությունը չէր: Այն ողբերգությունն էր մի ողջ գրական աշխարհի, մշակութային մի ծաղկուն գինաստիայի, գեղարվեստական մի ամբողջ քաղաքակրթության: Նրա ողբերգությունը ողբերգությունն էր նաև հա-

րազատ ժողովրդի: Ժողովուրդն էր, որ իրավիճակից դժգոհ, հիասթափված ազատության, հավասարության, եղբայրության պատիք կոչներից՝ ապավինում էր նորին, նոր խոստումներին և, դրանցից էլ հուսալքված, որոնում էր մեկ ուրիշը: Մանավանդ մեր ումանտիկ, դուրահավատ ժողովուրդը, որի ամենահարազատ զավակն էր Եղիշե Չարենցը նոր ժամանակներում:

Չարենցի կյանքի ողբագին ավարտի և ըստեղծագործության բռնի արգելման պատճառով զգալիորեն տուժեց հայ գրականությունը, ապա եղբակցորեն զեկուցողը, տուժեց երկար ժամանակ, մինչև օրս: Քսանական, մասամբ երեսնական թվականներին գրականության մեջ նրա սերնդակիցների մուտքով, ընթացքով և հատկապես իր՝ Չարենցի, հայրենի զպրուստյան այդ առասպելական սերմնացանի անդուլ շանքերի շնորհիվ հայ պոեզիան արդեն հասել էր մի մակարդակի, որ ներդաշնակում էր այն օրերի Քսանյանի ճարտարապետությանը, Սարյանի կերպարվեստին, Արեղյանի գրականագիտությանը, Աճառյանի լեզվաբանությանը, հասել էր դասական մտքի և արվեստի մի երկնակամարի, որի խորությունը, բարձրությունը, լայնությունը ճշգրիտ համեմատական էին հայ մտքի և արվեստի նախորդ, կարճատև, բախտավոր ժամանակների կուտակումներին:

Մեզ համար Չարենցով սկսվեց քսաներորդ դարը և ավարտվում է նրանով, վերջում ասաց զեկուցողը: Դա մարդկության վեհաշունչ պատմության ամենահոգոր, բայց և ամենաախտավոր դարն էր: Քսաներորդ դարում թափված արյունն ու արցունքը, ավերն ու ավեր ծածկում են նախորդ բոլոր դարերին: Չարենցը, որ երրորդ հազարամյակի առաջին դարը միայն լուսավոր մտքերի ու հզացումների, մարդաշահ գյուտերի և արարումների, հաշտության և խաղաղության դար լինի ողջ մարդկության և մանավանդ Եղիշե Չարենցի պաշտելի հայ ժողովրդի համար, իր նորակերտ՝ «Նախի երկրի» փորձություններով լի բախտի ճանապարհին:

Ակադեմիկոս Հր. Թամրազյանի զեկուցումը նվիրված էր Չարենցի վերջին իղձերի բացահայտմանն ու քննությանը: Մեծ գրականագետն իր զեկուցման մեջ այս շարենցյան անսպառ շունամարանից ներկայացրեց մի շարք զոհարներ, որոնք բանաստեղծը գրել է իր կյանքի վերջալույսին: Դրանց մեջ, նշեց գրականագետը, հաննարևը բանաստեղծի վերջին խոհերն ու իղձերն են, որոնք լուսավոր պատգամներ են գալիք սերունդներին:

Չարենցի գրեթե բոլոր ստեղծագործությունները, կարելի է ասել, լի են խոհերով ու խորհուրդներով: Խոնացած, դեղնած ու փոշոտ թերթիկները, սևագրությունները իրենց մեջ պահում են նաև ժամանակի մեծագույն մարդկանցից մեկի անձնական ապրումները, աշխարհից բաժանվելու ցավը:

Այնքան մազը կա իմ սրտում, այնքան

դառնություն

ես միայն վիշտ եմ տեսել, և բախիծ,

և թույլ...

Այս մթնոլորտում, ընդգծեց զեկուցողը, նախամահու ցնցող երգերի, ողբերգական ապրումների մեջ ծնվում է հոգեբանական մի քաջադիպ դրամա, որի մեջ բացվում են Չարենցի բովանդակ մեծությունը և ժամանակի պատկերը:

Այնուհետև զեկուցողը նշեց, որ Չարենցը իր կյանքի վերջին շրջանում ևս մնաց անկեղծ ու անմիջական, ազնիվ ու անարատ և մենակ ու վեհ՝ ինքն իր և իր խոհերի ու մտորումների հետ: Սակայն նրա այդ մտորումներն ու խոհերը անձնական բնույթ չունեին, այլ դրանք բխում էին ժողովրդի ճակատագրից, գուշակությունների ու տեսիլների էին անցյալի, ներկայի ու գալիքի մասին: Բանաստեղծի «Ով հայ ժողովուրդ, ջո միակ փրկությունը ջո հավաքական ուժի մեջ է» պատգամը գրականագետը բնութագրեց որպես հայոց ճանապարհի համար հավերժ կենսական, դեպի դարերը տանող իմաստուն խորհուրդ: Կրակված ու անհանգիստ հոգին արծարծում է հայ ժողովրդի կենտրոնացման և հավաքական ամբողջության խնդիրը նույնիսկ քանտի և մահու սպառնալիքի մթնոլորտում, ասաց նա: Հոգևոր ու ֆիզիկական հավաքականություն՝ մի պայծառ միտք, որը թանձրացել էր նաև Միամանթոյի «Հայրենի հրավեր»-ում: Տառապած հանճարի մասին բանաստեղծի հյուսած այս պոեմը ստանում է լուսավոր երանգներ, պայծառ վերջաբան: Մոայլ օրերին նա հավատում է հայոց հողի և երգի մոտալուտ ծաղկմանը:

Մնվում էին նոր բանաստեղծություններ և գրառումներ, խոհեր, անավարտ էջեր, այնուհետև շարունակեց զեկուցողը: Բազում մտահոգացումների և խոհերի տարերային հոսքը ճնշում էր բանաստեղծին, իսկ ժամանակը քիչ էր: Միայնությունը, գիշերային կիսախավարը, ընկերների ծանր ճակատագիրը, հեռացող մարդկանց ձայները խեղդում էին զգայուն հոգին: Նա հանգիստ էր փնտրում միայն բանաստեղծության մեջ, խոսում էր հեռավոր բերեկամի հետ, զրույց էր բացում հինավուրց դարերի մարդու և գալիքի պատանու հետ՝ թողնելով ցավի էջեր, վաճառներ, պատգամներ: Չարենցի կյանքի վերջին շրջանում գրած գրեթե բոլոր խորհուրդներն ու պատգամները, նրա նվիրական իղձերը, վերջում եզրակացրեց զեկուցողը, իր հարազատ ժողովրդի և հայրենի հողի սիրով ստեղծված անմահ բանաստեղծություններ են, լինեն դրանք ավարտուն գործեր, թե անավարտ պատարիկներ, լուսավոր երազներով շաղախված մտորումներ են իր ապրած օրերի ու գալիքի մասին:

Հայ նորագույն գրականության ամբիոնի պրոֆեսոր Ժ. Քալանթարյանի զեկուցումը, որ վեր-

նագրված էր՝ «Բնչպես վկան մեր հին՝ նարեկացին», լայն հետաքրքրություն առաջացրեց գիտաժողովի մասնակիցների շրջանում: Այն նվիրված էր Չարենց—Նարեկացի աղերսներին: Հոգեբանական ու ստեղծագործական բնույթի բարդ մի առնչություն է այդ կապը, շեշտեց նա: Գրական ամեն մի առնչություն ունի երկու կողմ. մի դեպքում դա վերաբերում է ուղղակի բնութագրումներին ու գնահատականներին, մյուս դեպքում հոգևոր առնչությունը դրսևակորվում է գեղագիտության քննադատում, կյանքի վերարտադրման սկզբունքների, պոետիկայի մեջ: Չարենց—Նարեկացի կապը արտահայտվում է նշված երկու եղանակներով: Նարեկացին եղել է Չարենցի հոգևոր տեսադաշտում ավելի վաղ, քան վերջինս սկսել է արտահայտվել այդ մասին: Ստեղծագործական փաստերը այդ են հաստատում, հավաստեց զեկուցողը:

Եթե 1920-ական թթ. Չարենցը Նարեկացուն դիմում է իրրև աղջային ստեղծագործ հանճարի խորհրդանիշ, շարունակեց նա, ապա 30-ական թթ., մասնավորապես 1936—37-ին նա մտնում է Նարեկացու աշխարհը, իրեն շատ մոտ ու հարազատ զգում նրան: Այս երևույթն ուներ մի քանի պատճառներ: Նարեկացին մի կարևոր մասն էր միջնադարյան գրականության, որի նկատմամբ Չարենցի աճող հետաքրքրությունը, ճանաչողական իմաստից բացի, ուներ սեփական պոետիայում ազգային ոգու մեծացման և արմատների խորացման խորհուրդը: Կար նաև անձնական, կենսագրական պահ. 30-ական թթ. ողբերգական իրադարձությունների ցավահին ընկալումը, իդեալների կորուստը, ծանր հոգեվիճակը Չարենցին մղում են դեպի «Ողբերգության մատյանի» հեղինակը, որի հետ նա ուղղակի զուգահեռներ է կատարում. «Բնչպես հնում վկան այն՝ Նարեկացին...»: Երկու հանճարների հոգեհարազատությունը և վերի ակնառու է դառնում 1930-ական թթ. ընդհանուր ողբերգական մթնոլորտում, երբ կատարյալ մարդու ծարավը և մարդկության փրկության գաղափարը մերձեցնում է նրանց, վերջում ասաց զեկուցողը, ծրնունդ տալով նաև ստեղծագործական բնույթի ընդհանրություններին:

Պատահական չէ, որ մեծ բանաստեղծի գրական ժառանգությունը գնահատելիս հաճախ նույնիսկ արտահայտվել է այն միտքը, որ Չարենցի մեջ կարծես ապրել է ոչ թե մեկ, այլ մի քանի բանաստեղծ, իր «Օղիշե Չարենցի «Տաղարանի» խոսքարվեստը» զեկուցման մեջ ասաց հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Եզեկյանը: Այս ասույթը առավել ևս տեղին է ու համոզիչ հատկապես նրա խոսքարվեստն ու լեզվաոճական ողջ համակարգն արժեքավորելիս:

Չարենցի ստեղծագործությունը խոր անուցման աղբյուրներ ուներ, շարունակից զեկուցողը նրա բանաստեղծությունների առաջին իսկ

տողերից մինչև վերջին քառատողերը անվիճելիորեն նկատելի են Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի և մանավանդ Վ. Տերյանի, Հովհ. Թումանյանի, Դ. Վարուժանի ու Ս. Մեծարենցի քնարերգության բանաստեղծական խառնուրդի և արտահայտչական միջոցների դրոշմներով:

Այնուհետև զեկուցողը բերեց իր միտքը հաստատող բազմաթիվ օրինակներ, նշանավոր արվեստագետների վկայակոչումներ և այլն: «Տաղարան»-ում, ասաց նա, սայաթնովյան երգերի նմանողությունը շատ ակնհայտ է դառնում արտաքին գործոնների առկայությամբ: Այս շարքում ևս ներքին կողմը, բանաստեղծության բուն ոգին հենց իրենն են՝ զուտ շարենցյան: «Տաղարանը» բաղկացած է 20 բանաստեղծություններից և երկու քառատողից, ընդամենը 236 տող և մոտավորապես 1.400 բառօգտագործում, բայց և այնպես Սայաթ-Նովայի լեզվի, մտածողության և ոճի պատրանքը հիմնականում ստեղծում են ընդամենը երկու տասնյակի հասնող բառեր ու արտահայտություններ, որոնք բնորոշ են ոչ միայն Սայաթ-Նովայի ստեղծագործությանը, այլև արևելյան գուսանական խոսքարվեստին:

Այս զեկուցողը «Տաղարան»-ից վերցված բազմաթիվ օրինակներով ցույց տվեց Չարենցի լեզվաոճական նրբությունները, նրա պատկերավորման ճոխ համակարգը, լեզվական բարձր կուլտուրան: «Տաղարանի» լեզուն ընդհանուր առմամբ, ասաց նա, Չարենցի շափածոյի լեզուն է, 20-ական թթ. սկզբի բանաստեղծությունների լեզուն, որը սակայն որոշ զիջումներ է թույլ տվել Սայաթ-Նովայի տաղերի լեզվական առանձին իրողությունների նկատմամբ: «Տաղարան»-ի խոսքարվեստը և ընդհանրապես լեզվաոճական ողջ համակարգը կարծես մի կամուրջ էր, անցումային մի փուլ Չարենցի հետագա շրջանի և առավել ևս «Գիրք ճանապարհի» քնարերգության լեզվի կատարելության և ոճական հնարանքների փայլուն դրսևորումների, որոնք և շնորհալի ու տաղանդավոր հետևորդների ունեցան հատկապես 1950-ական թթ. հետո, վերջում եզրակացրեց զեկուցողը, ավելացնելով, որ Չարենցի ստեղծագործությունը այդ շրջանում դառնում է մեր ժողովրդի հարազատ և մնայուն ժառանգությունը: «Լատիներեն թևավոր խոսքերը Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ» — այսպես էր վերնագրված գիտաժողովի վերջին զեկուցումը, որով հանդես եկավ հայ նորագույն գրականության ամբիոնի ղեկավար Ս. Գրիգորյանը: Նա հավաստեց, որ Չարենցի ստեղծագործության մեջ որոշակի թիվ են կազմում լատիներեն թեմավոր խոսքերը: Դրանք առանձնապես մեծ տեղ ունեն 1920—30-ական թթ. տարբեր գործերում՝ բանաստեղծություններում, պոեմներում, էպիգրամներում, վեպում ու նամակներում, լատինական խոսքարվեստի նկատմամբ Չարենցի ունեցած մեծ հետաքրքրության մասին վկայություններ կան նաև բանաստեղծին նվիրված հուշագրության մեջ:

Այնուհետև զեկուցողը Չարենցի երկերից բերեց լատինական թևավոր խոսքերի ու ասույթների բազմաթիվ օրինակներ և ավելացրեց, որ բուն գեղարվեստական ևրկերում տեղ գտած խոսքերը կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի, որոնցից նա առանձնացրեց հինգը. 1. Մատենագիտական և ժամանակագրական նշումներ, 2. լատինական ասույթներ, 3. Թևավոր խոսքերը որպես պատկերավորման միջոց, 4. լատինական արձանագրային բանաստեղծության կաղապարներ և 5. Թևավոր խոսքերը որպես վերնագրեր, Նա թվարկված այս բոլոր խմբերից բերեց մի թիվք օրինակներ:

Լատիներեն թևավոր խոսքերը, եզրակացրեց զեկուցողը, Չարենցի ստեղծագործությանը հաղորդում են դասականության ցայտուն գծեր և խորը առնչություններ ցուցահանում ամբողջ համաշխարհային մտքի հետ:

Վերջում, ամփոփելով գիտաժողովի արդյունքները, ակադ. Հր. Թամրազյանը բարձր գնահատեց կարդացված զեկուցումները և նշեց, որ դրանք կտպագրվեն «Չարենցյան ընթերցումներ» ժողովածուի հերթական թ-ը հատորում: Նա հրապարակեց նաև ԵՊՀ ռեկտորատի որոշումը այն մասին, որ բանասիրական ֆակուլտետի այն դահլիճը, ուր ընթացավ գիտաժողովը, այդուհետև կոչվելու է Եղիշե Չարենցի անունով, և այդտեղ են կազմակերպվելու գիտաժողովներ, ասուլիսներ, բանավեճեր, հանդիպումներ և գրական-մշակութային այլ միջոցառումներ:

Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ